## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 58

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 29-ը մայիսի 2019 թվականի թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 29 մայիսի 2019 թվականի թիվ 8 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրում նոր փոխակերպիչ էլեկտրական ենթակայան տեղադրելու համար 0.0015 հա հողամասը ՀԷՑ ՓԲԸ-ին ուղղակի վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում կատարելու և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

4. 2019 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում «Արենի» ՀՈԱԿ-ի կողմից կատարած և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների մասին համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

5. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01 հա և 0.015 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին:

8. Արենի համայնքի Աղավնաձոր, Արենի, Ելփին և Խաչիկ բնակավայրերում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից կառուցվող դաշտերի շինարարության թույլտվությունների տրամադրման համար ՀՖՖ-ին տեղական տուրքից ազատելու մասին:

9. ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության Վայոց ձորի մարզային ծառայության պետ Մ. Դովլաթյանի գրությունը քննարկելու մասին:

10. Արենի համայնքի ավագանու 15.03.2006 թվականի թիվ 04/3 որոշմամբ հաստատված «Արենի» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու և խոշորացված Արենի համայնքի «Արենի» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին:

11. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:

12. «Վայոց ձոր ֆրուկտ» ՍՊԸ-ի և նախկին Խաչիկի համայնքապետարանի միջև կնքված 01.09.2015 թվականի հողի վարձակալության պայմանագրի 4.4.7 կետը վերանայելու մասին:

13. «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից մասնագիտական ծառայություններ մատուցելու համար պայմանագրեր կնքելու համաձայնություն տալու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ______________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ______________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ______________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ______________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ______________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ______________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ______________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ______________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ______________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 59

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊԻՉ ԵՆԹԱԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 0.0015 ՀԱ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշումը՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

Տալ համաձայնություն Արենի համայնքի Ռինդ բնակավայրում նոր էլեկտրական փոխակերպիչ ենթակայան տեղադրելու համար, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0015 հա հողամասը ուղղակի վաճառքի կարգով, կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 3330 (երեք հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամով օտարելու Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ________________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ________________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ________________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ________________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ________________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ________________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ________________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷՐԻԿ ________________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 60-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի Արենի այլ ոչ հարկային եկամուտներ գործառնական դասակարգման 26 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում ավելացնել 1 721 478 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել.

Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի.

ա) 4111 (աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածին՝ 1 421 478 (մեկ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ,

բ) 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին՝ 300 000(երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 61

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՆԳ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին **որոշում է՝**

«Արենի» ՀՈԱԿ-ի կողմից 2019 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում կատարած և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ______

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ______

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ ______

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ______

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ______

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ______

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ______

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ______

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ______

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ______

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 62

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.015 ՀԱ ԵՎ 0.01 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 29-րդ, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 10.05.2019 թվականի թիվ 1/փ-35 դրական եզրակացությունը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն.

1) Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0,015 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0179-0001, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա՝ կապի հողեր գործառնական նշանակության:
2) Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0,01 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0179-, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա՝ կապի հողեր գործառնական նշանակության:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 թվականի N 63

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի պահանջներով` Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

Տալ համաձայնություն

**1.** Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

**1.1** 0.00850 հա (ծածկագիրը՝ 10-004-0012-, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 29 070 (քսանինը հազար յոթանասուն) ՀՀ դրամ,

**2.** Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

**2.1** 0.02400 հա (ծածկագիրը՝ 10-008-0189-, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 82 080 (ութսուներկու հազար ութսուն) ՀՀ դրամ,

**2.2** 0.02250 հա (ծածկագիրը՝ 10-008-0184-0081, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 76 950(յոթանասունվեց հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ,

**2.3** 0.51000 հա (ծածկագիրը՝ 10-008-0154-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ի չափով՝ 159 375(մեկ հարյուր հիսունինը հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ,

**2.4** 0.51000 հա (ծածկագիրը՝ 10-008-0154-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ի չափով՝ 159 375(մեկ հարյուր հիսունինը հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ,

**2.5** 0.51000 հա (ծածկագիրը՝ 10-008-0154-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ի չափով՝ 159 375(մեկ հարյուր հիսունինը հազար երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ,

**2.6** 0.7200 հա (ծածկագիրը՝ 10-008-0154-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ի չափով՝ 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ,

**3.** Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

**3.1** 0.49900 հա (ծածկագիրը՝ 10-037-0002-, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 1 107 780 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթ հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

**4.** Աճուրդում հաղթող ճանաչված անձը կամ կազմակերպությունը սույն որոշման՝

ա) 2.3-2.6 կետերով նախատեսված հողամասերի վրա պարտավորվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 3 տարվա ընթացքում հիմնել բազմամյա տնկարկ, այլապես հողամասերը հետ են վերադարձվում համայնքին:

բ) 3.1 կետով նախատեսված հողամասի վրա պարտավորվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 5 տարվա ընթացքում կատարել կառուցապատում, այլապես հողամասը հետ է վերադարձվում համայնքին:

**5.** Աճուրդում գնված հողամասերը առաջիկա 3 (երեք) տարվա ընթացքում ենթակա չեն օտարման:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 64

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է*.

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող.

1.1 0.1953 հա (ծածկագիրը՝ 10-017-0229-0034, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը, 25 տարի ժամկետով, մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

1.2 1.203 հա (ծածկագիրը՝ 10-017-0226-0027, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը, 25 տարի ժամկետով, մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

1.3 1հա (ծածկագիրը՝ 10-017-0226-0028, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը, 25 տարի ժամկետով, մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 10000 (տաս հազար) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.37 հա (ծածկագիրը՝ 10-008-0265-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը, 25 տարի ժամկետով, մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 3700 (երեք հազար յոթ հարյուր):

3. Սույն որոշմամբ վարձակալությամբ հատկացվող հողամասերը տրամադրվում են բացառապես գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 65

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎԱՆԱՁՈՐ, ԱՐԵՆԻ, ԵԼՓԻՆ ԵՎ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԴԱՇՏԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՖՖ-ԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 42-րդ կետերի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավանաձոր, Արենի, Ելփին և Խաչիկ բնակավայրերում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից կառուցվող դաշտերի շինարարության թույլտվությունների տրամադրման համար ՀՖՖ-ին ազատել համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքից՝ ընդամենը 60հազար ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ____________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ____________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

ՍԻՄՈՆՅԱՆ ԵԴԻԿ ____________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 66

## ՀՀ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Քննարկելով ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության Վայոց ձորի մարզային ծառայության պետ տիկին Մ. Դովլաթյանի գրությունը՝ Արենի բնակավայրի գերեզմանոցի տարածքում թաղումները և գերեզմանների բարեկարգման աշխատանքները արգելելու մասին, որոշվում է մինչև սույն թվականի հուլիսի 1-ը կազմակերպել հանրային լսում՝ հրավիրելով Արենի բնակավայրի ընդհանուր ժողով՝ մասնակից դարձնելով նաև շահագրգիռ բոլոր կազմակերպություններին:

2. Համայնքի ղեկավարին. ժողովի արձանագրությունը ներկայացնել Արենի համայնքի ավագանու քննարկմանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 67-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.03.2006 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 04/3 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 15.03.2006թվականի թիվ 04/3 որոշմամբ հաստատված «Արենի» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը,
2. Հաստատել խոշորացված Արենի համայնքի «Արենի» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 68

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԻՎԱՆԴ ԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՍՄԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջով և հաշվի առնելով Արենի համայնքի բնակիչների դիմումները՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի սոցիալապես անապահով և ընտանիքում հիվանդ անդամ ունեցող հետևյալ բնակիչներին, ընտանիքի անդամների բուժման նպատակով, հատկացնել միանվագ դրամական օգնություն՝

1) Արտակ Եղյան՝ 100հազար ՀՀ դրամ

2) Անդրանիկ Հարությունյան՝ 100հազար ՀՀ դրամ

3) Շողեր Նավասարդյան՝ 100հազար ՀՀ դրամ.

2. Հիմք ընդունելով Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական ղեկավար Սեդա Հարությունյանի գրությունը Արենի համայնքի Չիվա բնակավայրի բնակիչ Հասմիկ Բարսեղյանին հատկացնել 100հազար դրամ դրամական օգնություն՝ խմելու ջրի կապտաժի վերանորոգման հետևանքով պատճառված վնասը փոխհատուցելու նպատակով:

Կողմ -9 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 69

### «ՎԱՅՈՑ ՁՈՐ ՖՐՈՒԿՏ» ՍՊԸ-Ի ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽԱՉԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋև ԿՆՔՎԱԾ 01.09.2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 4.4.7 ԿԵՏԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Թողնել ամփոփոխ «Վայոց ձոր ֆրուկտ» ՍՊԸ-ի և նախկին Խաչիկի համայնքապետարանի միջև կնքված 01.09.2015թվականի հողի վարձակալության պայմանագրի 4.4.7. կետը՝ Խաչիկ գյուղական համայնքի զարգացման ծրագրերի իրականացման համար օգնության կարգով տրամադրել տարեկան 5 միլիոն ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ________

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ ________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ ________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ________

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ ________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 70

### «ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն. «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից Արենի համայնքի Արենի և Ռինդ բնակավայրերում մասնագիտական ծառայություններ մատուցելու համար՝ մշակելի հողատարածքների ագրոքիմիական դաշտային ու լաբորատոր հետազոտության կատարում, ագրոքիմիական քարտեզի և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրի կազմում և հանձնում համայնքին, 171000 (մեկ հարյուր յոթանասունմեկ հազար) ՀՀ դրամի ծառայության պայմանագրեր կնքելուն:

Կողմ -8 Դեմ -2 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՆՏՈՆՅԱՆ ՃԱՀԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ